



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

M. Meesgjine
M. Meesgjine

891.99
4-23

23
261

23
261

261

261

26 NOV 2013

ԱՆՁՈՅՆ ՄԱՅԻՆԴԱՐ

ՏԻՐՈՒՐ ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐ

(Հայկական)

№ 1

891.99

Մ-23

ԵՎԱԼԼՆԵՐ

ի գ ի ս
Թոթաթելածի, ՆԻԿ. 21
1904

337x

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՐԱՄ. Ա.Բ. Խ.-Ի

891.59

Մ-23

Ա. Ե. ՅՈՎԱԿԻՆ

Ա. ՅՈՎԱԿԻՆ



ՏԻՄԻՐ ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐ

(Հայուղներ)



1. Գրիլ:
2. Իսկ մուը վայում էր
եւ հաշում:
3. Պատկեր:
4. Բնուրիւմը խօսում էր
իւս:

№ 1

АНТОНЪ МАИЛЯНЪ „ПЕЧАЛЬНЫЕ МОМЕНТЫ”

Արքատիպ Ա. Քութաթելածէի, սիկ. 21

1904



24 JUN 2013

41441

2976

Дозв. ценз 24-го Ноября 1903 г. Тифлисъ.

31-ЧЧ

իր բամկազին ընկեր—

Գրիգոր Առաքելեանցին
Առիրում է
Հեղինակը.

Գ Ր Ի Զ Ը

Այն գրչի մասին, որ պիտի խօսեմ այս
բովէիս, շարժւում է ձեռքիս մէջ, նրա սի-
րուն ճըկճըկոցը երաժշտական քաղցրու-
թեամբ հնչւում է ականջիս:

Նա կարմիր չէ, այլ սև. և այդ ինձ գուրը
է գալիս: Վրան արծաթազօծ տառերով «Fa-
beve» փիրմայի անունն է զրօշմուած: Ներ-
քին մասը թէև արծաթ չէ, բայց արծաթից
էլ աւելի զրաւիչ սպիտակութեամբ է փայ-
լում:

Ի՞նչպէս հասարակ, ի՞նչպէս չնչին է նրա
արտաքինը, սակայն նրա գործերը... Մի
ժամանակ ամենուցէք տիրում էր խաւարը
և մարդիկ խարխսափում էին տգիտութեան
մէջ: Յանկարծ գու երևան եկար, սիրուն
զրիչ, և պատուելով համայն մարդկութիւնը

պատող սև քօղը,—սկսեցիր գործել: Ամեն
ինչ կոշտ էր, կոպիտ ու տախտուկ, գու ա-
րիւն-քրտինք թափեցիր, շտկեցիր քո դա-
րաւոր տոկունութեամբ և այսօր զմայլում
ես՝ տեսնելով ջանքերիդ քաղցր պառողը և
այն հրաշալի յուշարձանը որ կոչւում է
լուսաւորութիւն:

Իրաւ, գու համայն մարդկութեան հա-
մար դարձար կինսաստու արև: Թանկագին
զրիչ տանչուող սրաերի միակ թարգման
ու միիթարիչ, հոգու և մտքի արտայայտիչ
գու միշտ հեռու կաց զեղծումներից, զրպար-
տութիւններից և զանազան չարաբաստիկ
միտումներից, որի համար քեզ այնպէս կը
սիրեմ ինչպէս կեանքու:

Մըրքան խորհրդաւոր ես այս կէս զիշե-
րին, երբ խորին պատրանքի մէջ յափշտա-
կուած լսում եմ ձայներ, որոնք անդորրու-
թեան մէջ լրացնում են ներդաշնակութիւնը,
ինչպէս մի զիշերերգ խորհրդաւոր ժամին:

—Ճըկ, ճըկ, ճըսա, բըստ:

Սրանք այն սովորական ձայներն են, ո-
րոնք համաշափ հնչւում են ականջիս: Այդ
սիրուն զրչի մշտական երգի միտկերպ ե-
զանակն է:

Մըրքան մեծ է քո պարտականութիւնը.

առանց քեզ չի անմահանում ոչ անգիրի, ոչ
թագաւորների, ոչ քաջերի, և ոչ մէկի աշ-
նունը...

Ո՞քան արցոնք ես սրբել թշուաների
աչքերից, ո՞քան կապանքներ խորտակել
ո՞քան մարդկանց ես երջանկացրել ու քա-
նի բերաններ են քեզ օրհնել բայց և քա-
նիշանի ազնիւ սրտեր են թշուանցել
ո՞քան անմեղ արեան հեղիներ են թա-
փուել ո՞րպիսի ոճիններ ու ո՞քան թշուան
գլուխներ են թռել անողոք դահիճների ձեռ-
քում... և շատ այսպիսի չարագործութիւն-
ներ, որոնք գործուել են քո լիգուակով այն
լիգուակով՝ որ հէսց այս ըստէիս էլ
կարող եմ փշել ձեռքիս մէջ։ Լեզուիդ
տակը ոսկոր չկայ որ ծակի սուտ ասելիս,
մէկ էլ տեսար բերանդ բաց արիր սև թոյ-
նով ու փրփրալով դրոշմեցիր քո բարեկամ
թղթի վրայ՝ «ապանել», «կախել», «աքսո-
րել», «զրկել բոլոր իրաւունքներից» և շատ
այսպիսի սոսկալի բառեր...

Օ՛, եթէ այդ բոլոր անարդարացի են
կտարեւում, անէծք այդպիսի գրչին։

«Անէծք այդպիսի գրչին», կրկնեց գրե-
չը և հանգարտուեց։

Վերկացայ տեղիցս, նայեցի պատուհա-
նից, աստղերը խաղում էին երկնակամարի
վրայ, իսկ արուանակը մի առանձին հըր-
ճուանքով ու ժպտով աւետում էր ինձ բա-
րի արշալոյս...

Դար ով վաստի ցոյցը մասնից մէջ
մասնաւ ու յանու զօն մոյ որոց միասնակ
առ մասն առանց ու առանց պատճենակար
ու ա ցոյցն ամենա որու ու նոյն քոր
ուն ու նույն բարարակ ու ուստան
հայուրար Առ ու որդիաթայուր միացէլ
ու անոնք պատճեն Յ առանցնական Առն
ուն ու ա ցոյցն նայուրար ու ուստան
ու առանց ու ուժիւն բարու ու մասն
ու ուստան ու յանահ վաստի պատճեն
ու ուստան ու յանահ վաստի պատճեն
ու ուստան ու յանահ վաստի պատճեն և
ուստան ու յանահ վաստի պատճեն ու ուստան
ու ուստան ու յանահ վաստի պատճեն ու ուստան
ու ուստան ու յանահ վաստի պատճեն ու ուստան
ու ուստան ու յանահ վաստի պատճեն ու ուստան

ԻՍԿ ՄՈԽԸ ՎԵՐԻՌՈՒՄ ԵՐ ՈՒ ՀՅԱԼԻՌՈՒՄ

Երէկ այնքան պարզ, գուրալի էր գար-
նանային օրը, իսկ այսօր մոայլ ու գաֆան:
Պատուհանից ոչինչ չի երևում, միայն շատ
պարզ լսում եմ յորդ անձրեկի թշոցը և ջրի
հոսանքը, որ արագ-արագ իշնում են տա-
նիքների խողովակներից: Մերթ դադարում,
մերթ սաստկանում է անձրել: Քամին իր
հերթին չի դադարում խաղալ ջրի կաթիլ-
ների հետ, նրանց հանգիստ չի տալիս: Ես
լսում եմ թէ ինչպէս խեղճ գրի կաթիլները
վախից ցաւալի ձայներ են հանում: Լը-
սում եմ նրանց բողոքը քամու դէմ
և տեսնում թէ ինչպէս խեղճերը կպչում են
պատուհանիս ապակիներին, կարծես պատըս-
պարուելու համար: Բայց ուշ է, երբ երկին-
քը գրկեց ձեզ ձեր հայրենիքից, դուք միշտ
այդպէս կը տանջուէք: Թւում է թէ ես էլ
ձեզ հետ տանջւում եմ, բայց դուք չեք ըգ-
գում, չեք տեսնում տանջանքս: Դժուար է
մինել մենակ, հիւանդ: Ա՛յս երանի մէկը

ներկայ լինէր տանջանքիս: Գէթ մի ժամ,
մի ըրպէ ես երջանկանայի: Ներսս յեղափո-
խութեան մէջ է: սիրտս, ուզում է խոր-
տակուել, փշրուել: Բայց դեռ վաղ է սիրտ
փշրուելու, թնդ նա կոտրուի, բայց չփշրուի
իսպառ, կոտրածը կը նորոգուի, իսկ փշրա-
ծը երբէք: Բայց, ասացէք անգութ խոցեր,
ի՞նչ էք ուզում, որ սիրտս մտած չարչար
կրծում էք ինձ: Գլուխս էլ շարունակ պտոյտ
է գալիս, աչքերս տարուբերուում են, ա-
կանջներիս մէջ լսում է մի ինչոր՝ խուլ ջըր-
վէժի ձայն, իսկ կրծքիս տախտակները այն-
պէս են թուլացել, որ ամեն մի շնչառու-
թիւնս խոր վերքի ակօս է թողնում: Ահա
ութերբորդ ամիսն է այս անգութ անկողինը
մաշում է ոսկրիներս: Թւում է ինձ թէ մի
ճանապարհորդ եմ ամայի անապատում, մի
կողմից արեի կիզող ճառագայթները, միւս
կողմից ծարաւը տանջում են ինձ:— Բայց
ուր է այն օպակիսը, որին սպասումէ յուսա-
հատ ճանապարհորդը: Աստուած իմ, այս
ի՞նչ սարսուռ է սպասում մարմնիս... ահա,
ուր որ է մօտենում է ժամը և սոսկալի ըո-
պէն... բայց լոիր, լեզու, տանջուիր սիրտ
իմ, խօսեցէք աչքեր: Յուզուած սիրտը որ-

քան սիրում է խօսել, նոյնքան և լուել; Օ՛,
նրան զգուելի են այս տեղերը: Խսկ մժմբ...
անդութ մարդիկ, Բնչու էք վառել այդ մո-
մբ: Անա իմ շուրջս այն թունաւոր հեղուկ-
ները, որոնց մի ժամանակ աղանութեամբ
ընդունում էի, թւում էր ինձ թէ գուք մի
բարասան կը գառնայիք իմ հիւանդ սրտիս,
խսկ այժմ որքան զգուելի՞ էք: Մինչև խսկ
կաթն էլ խանձում է կոկորդս: Զգում եմ որ
ներսս այրուում է և ջրի համար պապակում
եմ, բայց անդութ մարդիկ ինձ արգելում
են ջուր խմելու: Ես սեպհական ականջ-
ներովս լսեցի թէ ինչպէս պառաւ տան-
տիրուհիս հարցրեց՝ ճապիք թէ կը միո-
նի»: «կը մնոնի», պատասխանեց բժիշ-
կը, խսկ տանտիրուհիս մրմիջաց՝ «Հա-
զիւ կ'ազատուեմ այդ բեսից»: Ինչպէս
նա ուրախացաւ: Այս, ոզորմելի՞ մարդիկ,
ես ձեզ համար ծանր բեռ եմ, որից շուտով
կ'ազատուէք: Ոչինչ այդ բազգիս ծաղրն է,
կեանքի խաղը և գուք գեռ սիրտ ունիք
հևկորէն նայել այս անդութ խաղին: Հի-
ւանդը, միմիայն հիւանդը կարող է հասկա-
նաւ թէ ինչ են մարդիկ: Հենց այս ըովէիս
տանտիրոջս տղան տուն եկաւ, մտաւ իր ա-
ռանձնասենակը: Ես լսում եմ նրա ձայնը:

Նա մինակ չէ, նա իր ընկերոջ հետ է եր-
կուսն էլ իմ ընկերներն են, բայց իմ ըն-
կերները չեն: Մի ժամանակ մօտիցս չէին
հեռանում, խսկ այժմ... Սյդպէս են ամենքը
ևս... Հասկանում ես, սիրտ իմ, ամենքը...
իրանց հոգեկան, ուրախութիւններն ու բա-
ւականութիւնները որոնում են այնտեղ, ուր
խսկալէս դժոխիք է: Այցելի հիւանդին, կա-
րեկցել վշտարեկին, նրանք չեն ցանկանում:
Անա նրա ցանկութիւնները, ինչպէս ուրախ
խօսում է նա, ինչպիսի բաւականութեամբ
է նկարագրում իր սիրածի դէմքը, ընքշու-
թիւնը, իր անհուն սէրը դէպի նա: Այդպէս
է երեխ աշխարհի օրէնքը: Ես այստեղ տան-
ջուեմ, նա այնտեղ ծիծաղի, ես արտասուեմ
նա զուարձանայ: Որչափ դժուար, որչափ
ծանր է տանել մարդկանց այդ ծաղրը: Դը-
ժոխային խաւար միայնութեան մէջ հեծե-
ծում են մարդիկ և նրանց ձայնը թաղւում
է սանդարամետային մթութեան մէջ: Նրանք
լալիս են և նրանց յորդառատ արցունքները
թափում, կորչում են առանց ոչ ոքի սիր-
տը շարժելու: Թւում է ինձ թէ ես էլ նրան-
ցից եմ և իմ հեծեծանքը, իմ բողոքս, իմ
արտասուքս ոչ ոք չէ տեսնում, ոչ ոք չէ

խղճում։ Մի ըռպէ ժափտ է փայլում դէմքիս
և յանկարծ դրան հետեւում է մի այնպիսի
սուր հարուած, որ ես ակամայ գղջում եմ
արածիս վրայ և սիրուն—ժափտը կորչում
է, հետքից թողնելով մի այնպիսի ուշ շաւիդ,
որի վրայով հոսում են դասնութեան կա-
թիլներ... ժպտալ,—թշուառ յուսախաբրու-
թիւն, այդ միենոյն է թէ փոթորկալից ծո-
վում նստես և մոռանաս փոթորկի գոյու-
թիւնը, և համարձակ տեղ համնելու ցան-
կութեամբ առաջ գնաս ու սթափուես այն
ժամանակ, երբ ծովի կատաղի ալիքների
խաղալիք պիտի դառնաս։ Բայց ինչպէս
սրտով ցանկանում եմ ժպտալ, ծիծաղել,
սակայն շրթունքներս զողղողում են վախեց,
ամբողջ մարմնով սարսում եմ, երբ զգում
եմ հազի մօտենալը։ Շատ անգամ մտա-
ծում եմ, արդեօք ինչ է պահանջում ին-
ձանից կեանքը և ինչու նա այդքան
խիստ է դէպի ինձ։ Որ հասկանամ նը-
րան, ես հասկանում եմ, բայց ինչու կեան-
քը մէր տուաւ ինձ և ես այս սիրով շղթա-
յուեցի իր հետ, սիրեցի նրան հաւատարիս
սիրահարեալների սիրով, բայց յետոյ նա
ինձ զցեց վշտերի մի այնպիսի ցանցի մէջ,

որ սարսափով կրում եմ այդ պատիժը։ Կեան-
քը մի փշոտ անապատ զարձաւ ինձ համար և
այդ փշերի մէջ գեռ ևս ծաղկում են սիրուն
ծաղիկներ։—դրանք են կնանքիս վերջին
մնացորդները։ Որքան շատ են փշերը, այն-
քան աւելի զօրեղ է սէրս դէպի սիրուն ծա-
ղիկները...

Անգութ բաղդ, հրճուիր, որ քո թոյլ
զո՞ւ տրորուում է քո դաժան ոտքերիդ
տակ ուրախացիր որ ընտրած թակարդդ
ամենալաւ միջոցն է քեզ զուարձութիւն
պատճառելու։ Ի՞նչու չթողիր որ պարտքս
յատոցանեմ, ես դեռ շատ եմ պարտական
կեանքին և նա ինձ փոխադարձաբար։ Խեղճ իմ
ծնողներ, ահա այն պտուղը, որի համար աշ-
խատեցիք շատ տարիներ, ինչու ես չմեռ-
նէի ձեր հարազատ բաղուկների մէջ, կամ
ինչու վերջին անգամ ձեր որբացեալ թա-
փառական որդին չէ արժանանում գէթ մա-
հից առաջ համբուրելու ձեր թանկագին շի-
րիմները, ինչու բաղդը ձգեց ինձ օտար մի
անկիւն, ուր պիտի շուշս ամենից հեռու
տամ... Ա՞ի, դարձեալ թոքերս այրւում են,
գանգս ահա, ուր որ է կարող է ճաքուել,
իսկ աջքերս կորցնում են իրանց թանկագին
գանձը։ Ընկճուեց կամքիս ոյժը, կորաւ ե-

ուանդս և ես մնացի գատարի վշտերի մէջ՝
վիշտ.—ահա բոլորը՝ ինչ որ տուաւ ինձ
կեանքը, իսկ անգութ մահը ուզում է խել
ինձանից՝ և վիշտ, և սէր, և կեանք... Մի-
րած կեանքս գրկած ունէր ինձ, ապագան
սիրտ էր տալիս, ճակատագիրը հալածում,
իսկ անգութ ցաւը ամենից զօրեղ հանգիստ-
նալով՝ տրորեց ինձ ահա այս անկողնում,
այս տանշանքի օրորոցում: Կրակոտ լեզուն,
բոցավառ գրիչը լոեց և դրա տեղ լսում եմ
այժմ մահուան դժգոյն մեղեղին. լսում եմ
սրտիս քնքուշ շատ քնքուշ աւաշները, ո-
րոնց մէջ հնչուում է գժբաղդիս ցաւն ու
վիշտը...

Միակ, հաւատարիմ ընկեր իմ մոմ, կեան-
քըս քեզ նման մի մոմ էր, նրան վառեցին
և նա, ինչպէս տեսնում ես, հալուեց քեզ
նման... Մօտ է քո վախճանը, բարեկամ դու-
դողդողում ես, դու սարսափում ես մահից...

Այսուհետեւ նրա հայեացքը չբաժանուեց
մոմից: Մօտ էր նրա վերջին վայրկեանը.
նա տանշուում էր, իսկ մոմը վառուում էր
ու հալուում... Երկուսն էլ իրանց վախճանին
էին մօտենուում...

Ներկայութեան ամ ճամանակ քա-
շել է պատմուած անդադարուուն հով շնոր-
յացը՝ միմարձն գործուած պատմու-
թուած պատմուած անդադարուուն պատմու-
թուած պատմուած անդադարուուն պատմու-
թուած պատմուած անդադարուուն պատմու-
թուած պատմուած անդադարուուն պատմու-
ՊԱՏԿԵՐԸ

Հրաւիրուած էի ինջոյքի: Ամենքն ասում,
խօսում, ծիծաղում էին: Մի տեղ «Փանտ»
էին խաղում, միւս տեղ կարծիքներ հաւա-
քում և այսպէս ամենքն էլ ուրախ էին ու
անհոգ: Սակայն անսպասելի կերպով երկու
ուշացած հիւրեր ներս մտան, որոնցից մէկը
հագել էր կանացի մի անձոռնի տիկնոջ ըզ-
գեստ. միւսը—հրէայի: Վերջինը զարմանա-
լի նման էր «խելագար ջնուղին»՝ թէ իր
տարապով և թէ խօսակցութեամբ, որ բա-
ւական իւրացըել էր: Երկու ամուսինները
գրկեցին միմեանց, համբուրուեցան ու ակսե-
ցին պարել: Հանդիսականները չէին դադա-
րում ծիծաղելուց, աեսելով նրանց վերին
աստիճանի ծիծաղելի դէմքը և ծամածու-
թիւնները:

Այդ ժամանակ ես մօտեցայ սեղանին,
ալբումը ինձ հետաքրքրեց ու սկսեցի թեր-
թել: Աթոռը մօտեցրի սեղանին, գլուխս
յնեցի ձախ ձեռքիս ափին ու սկսեցի հան-
գիստ նայել: Բաւական հետաքրքրիր պատ-
կերներ տեսայ: Յանկարծ աչքերս ուղղուե-
ցան մի պատկերի: Մի թեթև սարսուռ ան-
ցաւ մարմնովս: Երկու շատ երկար, անխօս
ու խորհուրդաւոր կերպով զիտում էր այդ
պատկերը: Նրա մերամաղձիկ աչքերը ուղ-
ղուած էին դէպի ինձ: Աչքերս հետզհետէ
լցուում էին արտասուքով և սիրտս յուղ-
մունքից եռ էր գալիս:

Ալորհրդաւոր հայեցք:


Արդեօք ի՞նչ էր ուղում ասել: Ինչո՞ւ նա
այդպէս վշապից աչքերով նայում էր ինձ.
արդեօք ճանաչում էր ինձ այժմ, իսկ եթէ չէ,
ճանաչում, ասկա ինչո՞ւ այդպէս յափշտակիչ
հայեացքով ուղում է կլանել իմ ողջ միտքն
ու հոգին: Դարձալ տեսնում էր նրան իր
նախկին զրաւչութեամբ: Բայց նրա պատա-
նեկան դէմքի վրայ գեռ կարդացւում էր
կարծես անգութ ճակատագրի զայրոյթն ու
քէնը:

Այդ վաղամեռ ընկերոջս պատկերն էր:

Մեր ծաղրածուները դեռ շարունակում

էին իրանց միմասութիւնները: Դահլիճը
թնդում էր բարձրագոչ ցնծութիւններով ու
ծիծազներով: Այդ խառնաշփոթ ձայները,
այդ անդադրում ժխորը խլացնում էր ա-
կանջներս ու սիրտս յուղում: Ես զարձեալ
աչքերս չէի ուղում հետացնել նրանից:
Զգում էի որ աչքերումս խաղում էր ար-
տասուքը և կոկորդս կարծես ցամաքում:
Կարծես վշտերիս ալիքները դիպչում էին կո-
կորդիփիս՝ կամինալով խորտակել կեանքիս
պարփակը: Անզին ընկեր, —մտածում էի
ես, աչքերս չհետացնելով նրասիրելի պատկե-
րից, — երանի գէթ մի բոպէ դու այդ զգա-
յիք, տեսնէիր ինձ այժմ: Դու յիշում ես այն
օրերը որ մենք անց ենք կացրել միասին:
Յիշում ես, ասա, յիշում ես այն օրը, երբ
դու երեխայի նման փաթաթուեցիր ինձ և
աչքերդ ջրկալած ասացիր ինձ՝ «ընկեր, ես
պէտք է մեռնեմ, ես նախազգում եմ»...

Ա՛իս, յիշում եմ թէ ինչպէս մի գեղեցիկ
գիշեր միասին—նստած լուսամուտի մօտ խօ-
սակցում էինք: Մեր գիմաց իր գիւթիչ զը-
րաւչութեամբ փայլում էր լիալուսինը՝ բո-
լորելով նրա շուրջը սիրուն ասաղերը: Ի՞նչ
բան է լուսինը, մենք այն ժամանակից սկը-
սեցինք մօտենալ նրան, հասկանալ նոյնիսկ



Նրա լեզուն: Մենք յափշտակուած նայում
էինք լուսնին ու հաղար ու մի համեմատու-
թիւններ անում: «Ի՞նչ է այս բովէիս սի-
րահարեաների դրութիւնը,—ասաց նա ինձ
—մէկը սէր է արտայայտում, արտասում
և յագուրդ ստանում սիրածի գրկում, մի
ուրիշ տեղ միւսին մահ է սպառնում դաւա-
ճանութեան համար, մի երրորդ տեղ ծրա-
գիր են կազմում փախչելու մարդկանց ներ-
գաւոր լեզուներից ու անմիտ բանսարկու-
թիւններից: Մի այլ տեղ խեղճ բանտար-
կեալը զլուխը լենած լուսամուտի երկաթէ
վանդակին, լոփել-մնջիկ դառնութեամբ ար-
տասում է լուսնի դիմաց, կարծես յուսա-
լով նըանից օգնութիւն: Խոկ մի ուրիշ տեղ
ի՞նչ ևս կարծում, ինչ կը ցանկանայ հիւան-
դը այդ բոտէին, այն, որ իր թոյլ ու կմաղը
գարձած մարմինը ուղղեն դէպի այն կողմը
որտեղից նայում է լուսինը: Երեակայում ևս
այդ վայրինանը, ահան և նա, ընկաւ լու-
սամուտի մօտ, զլուխը, ողորմելի կերպով թե-
րեց դէպի լուսինը ու ել ոչինչ չխօսեց, այլ ան-
թարթ ու խղճալի աչքերով սկսեց դիտել, և
այդ բովէին, անշուշտ, կեանքի քաղցր մու-
զիկան կը խոցուէր նրա սիրաը, կը բոր-
բորէր նրա նախանձը և այսուհետև ներքին

կոիւը քանի գնար, այնքան պիտի սաստ-
կանար, և նրա մէջ՝ կը ծագէր տանջող հար-
ցը ինչու մեռնել, ինչու զրկուել այս բո-
լորից»...

Այնուհետև մենք լուսնին նմանեցնում
էինք մի կոյսի, որին պիտի սիրել, հիանալ,
յափշտակուել, բայց... նեռուից: Եւ մեր եր-
կակայութիւնը քանի գնում, այնքան վառ-
ում էր, և հետզիւեէ աշխատում էինք մէկս
միւսից լաւ համեմատութիւններ գտնել և
արտայայտել: Այդ մեզ բաւական ոգեսրեց
և մենք քանի գնում, այնքան խորը կերպով
ըմբռնում էինք նրա խորհրդաւոր կողմերը:
Ա՛խ, ինչպէս նա սիրում էր պոէզեա: Այդ-
պիսի բոպէներում նա ամբողջովին զգաց-
մունք էր դարնում: Նա վեր կացաւ իր տե-
ղից մօտեցաւ գրքերի աստիճանակին և մի
փոքր որոնելով գտաւ ուզած գիրքը՝ նստեց
դարձեալ իր տեղն ու սկսեց թերթել: Յան-
կարծ նա կանգ առաւ, նա գտաւ ուզած
պատկերը: Այնտեղ նկարուած էր մի գե-
ղեցկունու, մի անմեղ արարածի պասկեր:
Տաղանդաւոր նկարչի վրցինը տուել էր նը-
րան այնպիսի մի տեսք, որ մարդ ակամա-
յից յափշտակում էր: — «Սրա անունը կի-
դա է, — ասաց նա մի առանձին բաւականու-

թեամբ,—ներիք ինձ որ ես անկարող եմ
նուաստ բառերովս արտայայտել սրա չնաշ-
խարհիկ գեղեցկութիւնը, գեղարուեստի այս
շնորհալի օրինակը, բանաստեղծի՝ կոճքից
դուրս թռած այդ զեփիւոը, անմեղութեան
տիպար այս աղաւնին, ես չեմ կարող նկա-
րագրել սրա դէմքին բոլորած այս հրաշալի
մաղերը, այս սեռակ, հառաջք արտայտեց՝
աչքերը. Ո՞չինչ ոչինչ չեմ կարող ասել սրա
գեղեցկութեան մասին: Տես, շատերն են սը-
րա նման, բայց և ոչ մէկը: Դու յիշո՞ւմ ես,
քեզ պատմել եմ որա վիպական կեանքի մա-
սին, որի վիշտն ու տանջանքը շատ մօտ են
իմ սրտին: Ես սիրում եմ դրան, որովհետեւ
ինձ մինչև այսօր չի դաւաճանել, նա այն է՝
ինչոր կայ, նա երբէք չի փոխում, նա միշտ
այդպէս սէր է արտայայտում:

Ես խօսում էի հետը, բայց նա այժմ, ինձ
չէր լուսմ, նա ինձ յիշեցը այդ և ինքը
լուրասուզեց այդ յիշողութիւնների մէջ: Նա
մերթ երգում, մերթ հառաջում, համբուրում
պատկերը և յետոյ գիրը ծալում. նորից
բաց էր անում, դիտում, հիանում...

«—Ի՞նչու դու կենդանի չես, —մըմիջաց
նա—որ ես սիրեմ անկեղծ, անբիծ սիրով ոք,
ինչպէս լուսնին»:

Այս ասելով նայեց. ինձ, կարծես յիշեցը—
նելով լուսնի պատմութիւնը:
—«Այն, —պատասխանեցի ես, —ինչպէս
լուսնին»:

Ապա նա սկսեց երգել մեղմ, գողգոջ ձայ-
նով և ես նկատում էի թէ ինչպէս խեղճը
փոխուեց և աչքերը լցուեցին արցունքով:
Զգիտեմ արգեօք պատկերը նրա մէջ զար-
թեցրեց իր վաղեմի սէրը, այդ պատկերը նը-
ման էր արգեօք իր դաւաճան սիրեցեալին,
թէ մի ուրիշ բան էր նրան տանջողը, ես
ոչինչ չհասկացայ, միայն նա գարձեալ
մըմնջում էր՝ «Ա՛խ, անա մի կոյս, որին
պէտք է սիրել, որի համար պէտք է տան-
ջուել... Օ՛, խօսիր, պատասխանիր»...

Իսկ լիդան, կարծես այդ հարցից մտա-
տանջութեան մէջ ընկած, նայում էր դէպի
երկինք, կարծես կասկածելով մտրդկանց
հաւատարմութեան վրայ: Կարծես նա ասե-
լիս լինէր՝ «Ես միշտ այդպէս սէր կը մնամ.
իմ կուսական կուրծքս սիրոյ անսպառ աղ-
քիւր կը լինի և դուրս կը ժայթքի այն ժա-
մանակ, երբ մէկը գոնէ ինձ նման կը լինի»:

Նա ընդհատեց երգը, գլուխը խոնարհեց,
աչքերը մօտեցրե, լիդայի պատկերին և
արտասուքի երկու խոշոր կաթիլներ գլո-

րուելով ընկան նրա կուսական անարտատ դէմքի վրայ:

— «Արժէ արտասուել քեզ համար,— շնչաց նա - դու շարժեցիր սրտիս ամենախոր տեղի լարերը, ևս պարտական եմ քեզ: Որքան քաղցր է պոէզեան երբ տիրապետում է մարդուն: Վիշտ, արտասուք: բնութիւն, երաժշտութիւն, գեղարուեստ ահա այն բուլոր որոնք ապրում են պոէզիայի գրկում, դէպի ուր պէտք է ձգտեն մարդկանց քննքուշ սրտերը: Օ՛, ևս արտասուքով կը թըրջեմ այն ճանապարհը, որ տանում է դէպի պոէզեայ»...

Այսուհետեւ նա արտասուռմ էր: Ինձ թուռմ էր թէ այդ լիդան լեզու առած խօսում էր մեղ հետո: Լիդայի այդ հոգերանական գաղտնիքը բորբոքեց, բռնկեց նրա մէջ կեանքի նախանձը, ապրելու ցանկութիւնը: Ել չկարողացաւ տանել այդ ներքին կրիւր, արտասուալի աչքերով ընկաւ անկողին և էլ ոչինչ չխօսեց:

Ես երկար ժամանակ մտածում էի այդ հոգեկան երեսյթի մասին: Իսկ ուր են այժմ այն նուրբ զգացմունքներդ: Ո՞ւր են քո գանգրահեր մազերը, սիրուն դէմքդ, ազնը-տութեամբ տոկորուած աչքերդ, հեզ ու խո-

նարհ սիրտդ և այն սպիտակ, մեղքամոմի նմար մատներդ, որոնք խաղում էին քո սիրած քնարի վրայ՝ շատերի սիրտ շարժելով: Եւ այդ ամենը հողի տակ...

Սյսպէս աչքերս յառած սիրելի պատկերին, յիշողութիւնները մէկը միւսին հաջորդելով ինձ բոլորովին վերացըին տարան մի այլ աշխարհ: Զգում էի որ աչքերս լողում էին ծովի մէջ, բայց չէի զգում որ նրանք կաթել-կաթել գլորւռմ էին: Սյդ այն ժամանակ զգացի, երբ ականջիս հասաւ իմ անունս հարցնելով թէ ինչ է պատահել ինձ: Ես շրփութեած պատասխանեցի «ոչինչ»: «Ոչինչ», ահա մի բառ որ արտասանելիս սիրտը տակըն ու վրայ եղաւ: Եւ խակապէս ի՞նչ խօսքերով կարելի էր յափուրդ տալ նրանց հետաքրքրութեան, քան «ոչինչ» բառով: Ճանաւանդ երբ նրանք ծանօթ չեն քո փոթորկալից սրտի հետ, միթէ կարող ես սիրտ միանգամից բանալ այն էլ անհոգ, զուարթ բովիներում, երբ ամենը հաւաքուել են զուարծանալու: Բովիէապէս փոխուեց հանգիսականների ուրախ արամադրութիւնը: Փոքը ինչ հանգստանալուց յետոյ կեղծ ուրախութիւնը փայլեց դէմքիս և նրանք դարձեալ շարունակեցին իրանց զուարծութիւն-

ները: Բայց սիրաս անհանգիստ էր. մի անդ
գամ էլ նայեցի այդ ուրախ խնջորեն և
յուզուած գուրս եկայ, գարձեալ չհեռացնե-
լով մտքիցս սիրելի ընկերիս մելամաղձու,
խորհրդաւոր պատկերը...

ԲՆՈՒԹԻՒՆԸ ԽՈՍՌԻՄ ԵՐ ՔԵՏԱ

Երեկոյեան անձրեկից յետոյ մենակ նըս-
տած էի այգում: Քամին դադարել էր, ու
նրան յաջորդել քաղցր զեփիւոը: Օդը սառն
էր բայց գուրալի: Շուրջս սոսափում էին
խիտ ծառերը: Թւում էր թէ նրանք էլ են
հասկանում միմիանց: Թէ նրանք էլ՝ իրը մի
բանից դրդուած սըւաւում են ու դողում:
Խօսում այնպիսի մի բռնազբախիկ լեզուվ,
որ ակամայ խղճում էի նրանց: Գլուխս յե-
նած ծառին նայում եմ և մտածում մնչ է
մարդս, և ինչ է բնութիւնը, ուր է սկիզբը
այս բոլորի և ուր է վախաճանը»: Ծառերի
խիտ ստուերների միջից հազիւ նկատնի էր
մի քանի ճրագներ, իսկ հեռում վառում
էր զլիսաւոր փողոցների ելեքտրական լու-
սաւորութիւնները: Աչքերս գարձրի գէպի
երկինք և ով զարմանք, տեսայ թէ ինչ-

պէս երկու փայլուն էակներ շարժւում էին
ամպերի մէջ: Ես նկատում էի թէ ինչպէս
կտոր-կտոր ամպերը վագում էին մէկը միւ-
սի ետևից, և որոնցից մի քանիսը կիսաճա-
նապարհին ոչնչանում էին: Ահա, նրանք
ծածկուեցին, կրկն երևացին, կրկն ծած-
կունցին: Սյդ փայլուն էակները կամինում
էին ժպտալ, սակայն անգութ ամպերը նը-
րաց խեղդում էին: Նրանք կորցնում էին
իրանց առաջուան փայլը. նրանք դողում,
հոկեկում էին, բայց այնքան հեռու, որ նը-
րանց ձայները հազիւ էին արձագանք տա-
լիս սրտիս մէջ: Ականջներս չի՞ն գործում,
բայց ինչու սրտիս մէջ լսում էի նրանց
տանջուող ձայները, ինչու ես նրանք գըտ-
նում էի այս վշտակիր կրծքի տակ. ինչու
նրանք ջանք էին անում մի կերպ նայել ինձ
այն մոայլ, ահարկու սև քօղի տակից: Ի՞նչ
էին փնտում արդիօք իմ մէջ և ինչ էի
փնտում ես նրանց մէջ: Տեսնում եմ ահա,
թէ ինչպէս խեղճերը մեծ ջանքերով ուզում
են ազատուել այն ծանր ու ահաւոր բեռի
տակից: Նրանք վագում էին միմիանց ետե-
փից, սակայն ոչ մէկը չէ կարողանում հաս-
նել իր նպատակին: Բայ երևոյթին երկու-
որն էլ աշխատում են փախչել չարանենդ.—

Ժանու ցանցերից: Ամպերը տեղ տուին նը-
րանց, և նրանք մի փոքր ազատ շունչ քա-
շեցին ու սկսեցին վագել երկնքի ծովանման
տարածութեան վրայ: Մինչ այդ ետևից ի-
րար վրայ անցնելով, միմիանց հրհրելով ու
աղմուկներով առաջ էին գալիս գորշ ամպե-
րը առաջուանց աւելի գոռող, աւելի կրա-
կոտ, աւելի համարձակ ու օտարութի: Երանք
դիւային ճարպիկութեամբ աշխատում էին
ձգել երկուսին իրանց որոպայթի մէջ: Եր-
կու բարեկամներս սրտասրոփ ջանք են առ-
նում հեռանալ սպաննող չարիքից, սակայն
իգորու: Երկուպն էլ քօղարկուեցին այդ դը-
ժոխային խաւարով, որ հազիւ, նոյնիսկ
աննշմարելի կերպով տեսնում էի միայն նը-
րանց աղոտ ստուերները, որ առանց կանգ
առնելու, դողգոջ քայլերով փախչում էին
դառնագին: Բնութիւնը այդպէս տանջուում
էր իր այդ քաօս զրութնան մէջ: Քիչ յետոյ
ամպերը լեզապատառ իրար վրայ անցան,
գոռգոռացին ու դսղգողալով յետայետ նա-
հանջեցին: Ահա, վերջապէս դուրս եկան եր-
կու տանջուող էակները, թողնելով ամպե-
րին գոռգոռոցի ու դժոխային աղմուկների
մէջ: Ահա մելամաղձոտ լուսինը ընթանուած
է արագ և նրա ետևից աստղը հեալով:

Այժմ բոլորովին պարզ տեսնում եմ լուսա-
նի կուսական դէմքը, նրա փոքրիկ բերանը,
քիթը և անսմեղ աչքերը, որոնց մէջ կարծես
մի անսահման բերկրանք կար: Նրա չքնաղ
պատկերը, շաղախուած դուրալի, մաքուր
լուսով արտացոլում էր դէպի ինձ քաղցր
ժամաներ: Ես նայում էի նրանց կարօտա-
գին, կարծես նրանք խօսում էին և ես լը-
սում էի նրանց: Ես դարձեալ լսեցի մի
ձայն, որ մինչեւ հօգուս խորքերը թափան-
ցեց՝ աւելի յօւգելով այնտեղի փոթորիկը:
Նա կանչում էր ինձ իր մօտ, իսկ ես շատ
հեռու էի: Այդ մտքերի մէջ խորասուզուած,
արտասուքն աչքերիս, մանկացած արտով
սլացայ դէպի լուսինը՝ բոլորվին մոռացու-
թեան տալով աստղին: Թւում էր թէ ես բո-
լորվին մօտեցել եմ նրան, կամ նրա թո-
վիչ պատկերի ճառագայթները անքակտելի
ամուր կապերով պինդ-պինդ գրկում են ինձ:
Կորաւ տիբութիւնս, կուրծքս լայնացաւ
բերկրանքից: Ես երջանիկ էի, ես բաղդա-
ւոր էի... Զգիտեմ թէ որքան ժամանակ
տևեց այդ, երբ ես գտայ ինձ նրա մօտ: Նա
բաւական տանջուել էր: Ես երկար ժամա-
նակ գրկած ունիի նրան բազուկներիս
մէջ...

— «Ո՞ւր ես գնում նրա մօտ, եկինձ հետ
դարձեր, ապա թէ ոչ ես ջանք կ'անեմ վայր
ձգել քեզ, կ'ոչնչացնեմ քեզ»...

Այդ սարսափելի ձայնը կարծես փշրեց
հոգուս ամուր շղթաները, թուլացրին ձեռ-
քերս և ես ընկնում էի սիրածիս գրկած,
սակայն այս անգամ նա ինձ գրկեց իր քաղ-
ցըր արբեցուցիկ բազուկների մէջ և ես
նայեցի յետ և տեսայ նոյն աստղը: «Ասա,
ինձ,— հարցնում եմ նրան—ով է նա, որ
այդպէս խիստ սպառնում է և լինչ է ներ-
կայացնում նա իրանից»...

«Նա, որ միշտ այդպէս յետ է մնում, նա
է այն բոլորը ինչոր հակառակ է ինձ»,
եղաւ պատասխան:

Զգիտեմ թէ որքան ժամանակ տեսաց այդ,
սակայն երբ սիրտս հանդարտուց, երբ հե-
կեկանքս գաղարեց և ես սրբում էի արտա-
սունքներս. արդէն կէս գիշեր էր:





904

ԴՐԱՆԻ Տ 5 Ա.

891.99
Մ-23

ՀՀ Ազգային գրադարան



NL0352217

41841